ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 264-Ա

18 հուլիսի 2023 թ.

ԱՐԹՈՒՐ ՂԱԶԱՐՅԱՆԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքի 158-րդ, 164-րդ հոդվածների, «Տարածքային կառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածի 3-րդ մասի, 14-րդ հոդվածի, «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի, 19-րդ հոդվածի դրույթներով և հիմք ընդունելով Արթուր Ղազարյանի անձնական դիմումը

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար Արթուր Ղազարյանին տրամադրել 2023 թվականի աշխատանքային տարվա ամենամյա նվազագույն արձակուրդը՝ 2023 թվականի օգոստոսի 1-ից 2023 թվականի օգոստոսի 28-ը ներառյալ:

2. Արթուր Ղազարյանի արձակուրդում գտնվելու ընթացքում Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Ծովակի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության տնօրենի պարտականությունների կատարումը վերապահել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզի «Կարճաղբյուրի առողջության առաջնային պահպանման կենտրոն» պետական ոչ առևտրային կազմակերպության ընտանեկան բժիշկ Անահիտ Սարգսյանին /առանց տնօրենի պաշտոնի համար նախատեսված աշխատավարձի վճարման, համաձայնությամբ/:

X

ԿԱՐԵՆ ՍԱՐԳՍՅԱՆ

ՄԱՐԶՊԵՏ՝ Подписано: SARGSYAN KAREN 3710840503

Կ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ք.Գավառ